Արձանագրության 3

Երևան քաղաքի վարչական շրջաններում մինի-ֆուտբոլի դաշտերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/27» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

20.06.2018թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Շաքարյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Գևորգյան /գնահատող/, Ս. Գևորգյան /գնահատող/, Ե. Մատասյան /բացող/, Ա. Մարգարյան /բացող/

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

(Է. Շաքարյան)

1.1 Ընդունել ի գիտություն որ.

1.1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Է. Շաքարյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«ՃարտՇին նախագիծ և դիզայն» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/27» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Է. Շաքարյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ **«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/27»** ծածկագրով գնանշման հարցման ընտրված մասնակից հայտարարել «ՃարտՇին նախագիծ և դիզայն» ՍՊԸ-ին և վերջինիս ներկայացնել **Երևան քաղաքի վարչական շրջաններում մինի-ֆուտբոլի դաշտերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման** աշխատանքների կատարման պայմանագիր կնքելու առաջարկ:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Է. Շաքարյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Է. Շաքարյան

Անդամներ՝ ---------- Լ. Գևորգյան

---------- Ս. Գևորգյան

---------- Ե. Մատասյան

---------- Ա. Մարգարյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան